նոքա ի դիւամոլ և յանկրօն Պարսից յաւուրս Յազկերտի և Պերոզի, կային նոյնպէս ի նոյն բարեպաշտութեան զկնի միմեանց նաեւ թագաւորք բազումք։ Զարունակութիւն այսր ոսկեզէն և բարեբաղդ դարու փոյթ ընդ հարեալ եղեւ, երբ հատուածեալն ի Պարսից Միհր Սասանեանց եմուտ յԱղուանս և զկայ առեալ անդ, կառոյց զքաղաքն Միհրանաշէն, մօտ ի քաղաքն Բարդայ, ապա խորամանկութեամբ խնամացեալ ընդ Վաչականեան թագաւորութեանց, երարց զնոսա՝ ի կենաց և ինքն միապետեալ ընդհանուր աշխարհին որպէս Ուտէացւոց նոյնպէս Աղուանից և շրջակայից նոցին։ Առաւել լինէր տարաբաղդ, եթէ նովին կըռապաշտութեամբ տիրէին այնոքիկ Սասանեանք, բայց վերին հրամանն ոչ եթող զԱղուանս ի վշտալի վիճակի, վասն որոյ շարժեաց զսիրտ Վարազ Դրիգորի ի հպատակութիւն Քրիստոնէական ճշմարիտ կրօնի, որ ի ձեռն Վիրոյ կաթուղիկոսին Աղուանից մկրտեալ եղեւ Քրիստոնեայ"։

430 – «Աղուան հաւասար այլոց ոչ վերջացեալ դտաւ, նաեւ յԱստուածպաշտութենէ, քանզի աշակերտն Քրիստոսի Եղիշէ յետ մահուան առաքելոյն Թադէոսի վերադառնայ ի Հայաստանէ յԵրուսաղէմ, ընկալնու զձեռնադրութիւն ի Յակոբայ Տեառէն եղբօրէ, դայ յաշխարհն Աղուանից սկսեալ ի Ծագաց արեւելից ի քաղաքէն Զօլայ գուցէ Զուրա, քարոզէ զՔրիստոս և դարձուցանէ զնոսա ի մոլորութենէ կռոց, կառուցանէ զեկեղեցին ի Գիշ, և ինքն կատարի սքանչելի նահատակութեամբ ի դաշտին Զարդունայ, թողլով անդ զյոլով աշակերտս և զբազմաթիւ հաւատացեալ ժողովուրդս։ Թէպէտ առ ժամանակ ինչ ամենի լեռնականք կարացին բառնալ ի միջոյ զհրապարակական պաշտօն Քրիստոնէական հաւատոյ, բայց բազումք ի հաւատացելոց զնկուղս և զխուղս ընդ երկրեայս արարեալ ապօթատեղի՝ ոչ դադարէին հանապազ ի պաշտելոյ զԱստուած, որպիսի տեղիք ի ստորոտս Կովկասու ցարդ եւս յարգանօք պատուին ի բնակչաց, ըստ հայրենի աւանդութեանց։ Յետ որոյ Ուռնայր արքայ ի ժամանակս մեծին Տրդատայ և սրբոյն Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչի՝ ընկալեալ զհաւատս և զկրօնս ճըշմարիտն Աստուծոյ և ի ձեռին ունելով զլուսաւոր ջահ Քրիստո-